

ծանօթս ետ Իննովկենտեայ. թերեւս յայժմուս *ձեռնադրութիւնն*²⁰¹ աւելի ինչ քան զտուչութիւն դրօշուն նշանակիցէ. քանզի վաղագոյն իսկ Ռուբէն պսակեալ էր 'ի Լեւոնէ թագաւորական թագիւ 'ի կայսերէ բերելով. իսկ մեծ խնդրեան Լեւոնի առիթ էր կլային առումն. յայտ է թէ փախստեամբ կոմսին, կամ ոչ անդէն հանդիպելով²⁰¹, որ եւ զամս երիս ոչ կարաց մուտս գտանել. եւ յետ այնր եմուտ եւ տիրեաց անհակառակ, զի ոչ եւս էր Լեւոն յոտին, մերձ 'ի վախճանն գոլով. դարձեալ խնդայր մեծապէս զի 'ի գլուխ եհան աւարտեաց զբազմամեայ եւ զբազմահոգ գործ մի կենացն. եւ ոչ ոք եկաց հակառակ, ոչ պատրիարքն՝ որ թուի ձանձրացեալ յաղիկամի գործոց կոմսին, եւ ոչ Տաճարականք՝ զորս գոհացուցեալ եւ լիացուցեալ էր: Թէպէտ եւ գաղտագողի իմն եղեն մուտքն, այլ յայտնապէս՝ ընդունելութիւնն. գլուխ իշխանացն համախոհից Լեւոնի՝ էր սենեսկալն Անտիոքայ, հաւանօրէն հայրն Արշիվալդայ զօրականի, որ մտեալ էր 'ի ծառայութիւն Լեւոնի, եւ յամի 1210-1 տեսաք ընդ Հեղեայ դեսպան առաքեալ առ կայսրն եւ առ Քահանայապետն Իննովկենտիոս:– Իսկ զիա՞րդ արդեօք թուեցան սմա զայս նուագ՝ այսպիսի մուտք Լեւոնի եւ տիրանալն Ռուբենի հայրենի ժառանգութեանն. կամ թէ լուա՞ւ իսկ ստուգապէս զայսոսիկ 'ի սակաւ ամիսս՝ յոր յետ այնր եկեաց 'ի վերայ երկրի.– քանզի 'ի նմին իսկ ամի՝ յամսեան մայիսի երթալով 'ի Բերուճիա՝ հիւանդացաւ, եւ անփոյթ արարեալ դարման տանել անձին՝ անդամագօսութեամբ վախճանեցաւ²⁰², 'ի կէս յուլիս ամսեան (16 կամ 17), թողեալ սուգ մեծ ժամանակակցացն, եւ համբաւ մեծ յապագայն. ասացուք թէ եւ մեծ յիշատակ 'ի պատմութեան ազգիս մերոյ՝ յեկեղեցականն՝ եւ 'ի քաղաքական. առ որս՝ նման ոք նմին եւ նման Լեւոնի պիտէր 'ի ժամուն. եւ թերեւս այլազգ լինէր բաղդ սորա՝ եթէ ոչ այնպիսում հանդիպէր մեծոգոյ եւ զգօն հայրապետի. յորմէ՝ եւ ընդ շնորհացն՝ եզիտ եւս ընդդիմութիւն ոչ սակաւ, այլ եւ ինքն ոչ սակաւ վարանեցոյց գնաւ. եւ ոչ փոքր ժամանակ գողացաւ յերկոցուն միանգամայն վեհիցն՝ անտիոքեան խծբիծն, խոչընդոտն եղեալ միոյն՝ յառաւել բարգա-

²⁰¹ Յիշի 'ի պատմութեան յամի 1217 հրաւիրիլ նորա յԱնդրեասայ թագաւորէ Ունգարացոց եւ յայլոց եւ երթալ 'ի մարտ ընդդէմ այլազգեաց, եւ յերկրորդում ամին՝ 'ի տօնի Տեառնընդառաջին՝ լինել 'ի Տրիպօլիս, եւ երկրորդ անգամ ածել կին զՄելիսիստէ դուստր Ամաւրեայ թագաւորին Կիպրոսի եւ Բզապելլայ դշխոյի:

²⁰² Անդ եւ թողեալ մնաց մինչեւ ցայս ժամանակ՝ յորում գրէի զայսոսիկ, (1883), եւ լսեմ զի այժմու Քահանայապետս Լեւոն ԺԳ՝ պատրաստէ նմա շիրիմ 'ի Հռովմ, ուր եւ փոխադրելոց է զնշխարս նորին: